Ի՞նչ է աղբ

Կրթական նյութ

Ներածություն

Աղբն առաջին հայացքից ավելորդ կամ օգտագործման համար ոչ պիտանի նյութ է: Թափոնն այն ամենն է, ինչն այլևս չի կիրառվում կամ հայտնվում է շրջակա միջավայրում այնպիսի տեսքով (կամ այնպիսի քանակությամբ), որ բացասական ազդեցություն է ունենում վերջինիս վրա:

Ինչպե՞ս են առաջանում թափոնները

1. Որպես օրինակ՝ աշակերտներին ներկայացնել բանանի կեղևը: Մարդկանց մեծամասնությունն այն չի ուտում, հետևաբար, այն դառնում է «աղբ» մեզ համար: Մենք ուտում ենք միայն բանանի դեն ենք նետում՝ որպես «աղբ»:

2. Հարցրեք աշակերտներին տուփերի և նոր խաղալիքների փաթեթավորման մասին՝ մանրամասնելով, թե ինչպես է այդ փաթեթավորումը դեն նետվում՝ որպես «աղբ»:

Որտե՞ղ է առաջանում աղբը

Աղբը գոյանում է շատ տեղերում՝ տանը, դպրոցներում, խանութներում, հիվանդանոցներում, աշխատավայրերում, շուկաներում և այլուր:

Արդյո՞ք աղբը հանդիպում է բնության մեջ

Բնության մեջ աղբ հասկացություն գոյություն չունի: Պատկերացրեք մի միրգ, որը Դուք չեք սիրում: Օրինակ՝ նուռը: Եթե այն թողնեք պարտեզում, մրջյուններ, տարբեր միջատներ և թռչուններ կհայտնվեն դրա շուրջ և կսնվեն դրանով: Այսպես բնությունն ինքն է հոգում դրա մասին: Մի օրգանիզմի համար այդ «աղբը» դառնում է սնունդ, մեկ այլ օրգանիզմի համար՝ էներգիայի աղբյուր:

Մարդու առաջացրած աղբը

Մարդիկ առաջխաղացում են գրանցել գիտության ու նոր տեխնոլոգիաների ոլորտում պիտանի ապրանքներ արտադրելու համար: Նոր իրերի համար անհրաժեշտ են նաև ավելի շատ ռեսուրսներ, որոնք արդյունահանվում են բնությունից: Առօրյայում հանդիպող շատ իրեր նախատեսված են մեկանգամյա օգտագործման համար, ինչը ահռելի քանակության աղբի առաջացման պատճառ է դառնում:

Որքան շատ իրեր են մարդիկ օգտագործում, այնքան ավելի շատ աղբ է առաջանում: Որոշ մարդիկ դա գիտակցում են և շատ քիչ աղբ ստեղծում, բայց մեզնից շատերը սիրում են գնել, օգտագործել և դեն նետել այնպիսի իրեր, որոնք միգուցե իրականում կարող են դեռ օգտագործվել, կամ վերամշակվել: Այս սովորությունները տարածվել են ամբողջ աշխարհում, որի պատճառով աղբը շարունակում է լինել լուրջ մարտահրավեր:

Ի՞նչ պետք է կառավարվի առաջացած «աղբը»

Առավել արդյունավետ կառավարման համար շատ երկրներում կիրառվում է «թափոնների» կառավարման հատուկ պլան: Այս մոտեցումն օգտագործող երկրները տարանջատում են «աղբը» «թափոնից»՝ օգտագործելով կառավարման այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս աղբավայր ուղարկել միայն այն «աղբը», որը չի կարող երկրորդ կյանք ստանալ, կամ քայքայվել բնության մեջ:

Բնական հավասարակշռություն

Բնությունը քայքայում է օրգանական ամեն ինչ և այն նորից օգտագործում սննդի կամ սննդանյութի տեսքով: Առաջացած «աղբի» որոշ տեսակներ բնական ցիկլի մաս չեն, և, հետևաբար, բնության համար դժվար է ինքնուրույն մշակել դրանք: Սա նշանակում է, որ այդ պատճառով տեղի է ունենում բնական հավասարակշռության խախտում: Այն, ինչ ստեղծվում է բնության կողմից, հետ է վերցվում հենց բնության կողմից, բայց անցանկալի իրերը, որոնք մարդու գործունեության արդյունք են, չեն կարող սպառվել բնության կողմից դառնում են «աղբ»: